

Ոչ պաշտոնական թարգմանություն

**ՄԱԿ ՓԳՀ-ի դիտարկումները
«Փախստականների և ապաստանի մասին» ՀՀ օրենքում
փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին ՀՀ օրենքի
նախագծի վերաբերյալ**

Ներածություն

2018 թվականի ապրիլի 17-ին ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարության Միգրացիոն պետական ծառայությունը շրջանառության մեջ է դրել «Փախստականների և ապաստանի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին ՀՀ օրենքի նախագիծը (այսուհետ՝ «Նախագիծ»)։ Նախագիծը տրամադրվել է ՄԱԿ ՓԳՀ-ին 2018 թվականի մայիսի 8-ին։

Նախագծի վերաբերյալ սույն դիտարկումները ՄԱԿ ՓԳՀ-ն ներկայացնում է որպես Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր ասամբլեայի կողմից լիազորված գործակալություն, որը պատասխանատու է փախստականների և իր լիազորությունների շրջանակներում ընդգրկված այլ անձանց միջազգային պաշտպանության, ինչպես նաև փախստականների հիմնախնդրին հարատև լուծումներ տալու հարցում կառավարություններին աջակցություն մատուցելու համար։ Կանոնադրությամբ սահմանված կարգով՝ ՄԱԿ ՓԳՀ-ն իրացնում է միջազգային պաշտպանության իր մանդատը, ի թիվս այլոց՝ *«փախստականների պաշտպանությանն առնչվող միջազգային կոնվենցիաների կնքմանը և վավերացմանը նպաստելով, դրանց իրականացումը վերահսկելով և դրանցում փոփոխություններ կատարելու առաջարկներ ներկայացնելով»*։ ՄԱԿ ՓԳՀ-ի կանոնադրությամբ սահմանված վերահսկողական գործառույթները վերահաստատված են Փախստականների կարգավիճակի վերաբերյալ 1951 թվականի կոնվենցիայի (այսուհետ՝ Փախստականների մասին 1951 թվականի կոնվենցիա) 35-րդ հոդվածով, որի համաձայն Պայմանավորվող պետությունները պարտավորվում են *«համագործակցել Միավորված ազգերի կազմակերպության Փախստականների հարցերով զերագույն հանձնակատարի գրասենյակի հետ [...] իր գործառույթների իրականացման հարցում, և, մասնավորապես, դյուրացնում են Կոնվենցիայի դրույթների կիրառումը վերահսկելու նրա պարտականությունը»*։ Նույն պարտավորությունն ընդգրկված է Փախստականների կարգավիճակի վերաբերյալ 1967 թվականի արձանագրության (1967 թվականի Արձանագրություն) II հոդվածում։

Այսպիսով, ՄԱԿ ՓԳՀ-ի դիտարկումները և կազմակերպության մանդատի շրջանակներում ընդգրկված օրենսդրական փոփոխությունների վերաբերյալ հետագա խորհրդակցություններ անցկացնելու խնդրանքը հիմնված են վերոնշյալ միջազգային պարտավորությունների վրա: ՄԱԿ ՓԳՀ-ն նկատի է առնում նաև Հայաստանի Հանրապետության Սահմանադրության (այսուհետ՝ Սահմանադրություն) 81-րդ հոդվածի 1-ին մասով ամրագրված պահանջն առ այն, որ հիմնական իրավունքների և ազատությունների վերաբերյալ Սահմանադրությունում ամրագրված դրույթները մեկնաբանելիս հաշվի է առնվում Հայաստանի Հանրապետության վավերացրած՝ մարդու իրավունքների վերաբերյալ միջազգային պայմանագրերի հիման վրա գործող մարմինների պրակտիկան:

Ընդհանուր դիտարկումներ

ՄԱԿ ՓԳՀ-ն ողջունում է ՀՀ կառավարության շարունակական ջանքերը, որոնք ուղղված են ապաստանի տրամադրման ոլորտում գործող օրենսդրական նորմերի համապատասխանեցմանը միջազգային իրավունքի նորմերին և չափանիշներին: ՄԱԿ ՓԳՀ-ն ողջունում է այն կարևոր օրենսդրական նախաձեռնությունը, որը կոչված է լրացնել «Փախստականների և ապաստանի մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Փախստականների մասին օրենք) 24-րդ հոդվածը՝ նախատեսելով փախստականներին բնակարանի վարձակալության համար փոխհատուցման տրամադրում, ինչը կարևոր գործոն է, որը նպաստում է վերջիններիս տեղում ինտեգրմանը:

Այդուհանդերձ, ՄԱԿ ՓԳՀ-ն մտահոգություններ ունի կապված Նախագծի 1-ին և 2-րդ հոդվածների հետ, որոնցով լրամշակումներ են առաջարկվում Փախստականների մասին օրենքի 10-րդ և 11-րդ հոդվածներում: Հիմք ընդունելով ստորև բերված հիմնավորումները՝ ՄԱԿ ՓԳՀ-ն գնահատել է, որ Փախստականների մասին օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասում, 11-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերում առաջարկվող լրամշակումները՝ դրանց ներկայիս ձևակերպմամբ անհամատեղելի են Փախստականների մասին 1951 թվականի կոնվենցիայի դրույթների հետ, իսկ ընդունվելու և կիրառվելու դեպքում՝ դրանք կարող են հանգեցնել այնպիսի որոշումների կայացմանը, որոնք կհակասեն Հայաստանի Հանրապետության կողմից ստանձնած միջազգային իրավական պարտավորություններին: Ավելին, ՄԱԿ ՓԳՀ-ն կարծում է, որ վերոնշյալ լրամշակումներն անհրաժեշտ չեն, քանի որ գործող օրենսդրությամբ արդեն իսկ նախատեսված են այնպիսի դրույթներ, որոնք թույլ են տալիս Հայաստանի Հանրապետության իրավասու մարմիններին հասցեագրել այն իրավիճակները, երբ փախստականը վտանգ է ներկայացնում ազգային անվտանգության համար, և որոնք պրակտիկայում համարվել են լիովին բավարար. ՄԱԿ ՓԳՀ-ին հայտնի չէ վերջին տարիներին արձանագրված որևէ դեպք, երբ գործող օրենսդրությունը անվտանգության հետ կապված բացթողումների պատճառ դարձած լինի:

Հետևաբար, ՄԱԿ ՓԳՀ-ն առաջարկում է հրաժարվել Փախստականների մասին օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի, 11-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի առաջարկվող լրամշակումներից:

Հատուկ դիտարկումներ

1. 11-րդ հոդվածի 1-ին մասում առաջարկվող 4-րդ կետը

«Փախստականի կարգավիճակի բացառման հիմքերը» սահմանող Փախստականների մասին օրենքի 11-րդ հոդվածի 1-ին մասում առաջարկվող լրամշակումը ունի հետևյալ ձևակերպումը.

«1. Օտարերկրյա քաղաքացուն կամ քաղաքացիություն չունեցող անձին չի տրամադրվում փախստականի կարգավիճակ, եթե լուրջ հիմքեր կան ենթադրելու, որ նա՝

[...]

4) հնարավոր վտանգ է ներկայացնում Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության համար՝ համաձայն ազգային անվտանգության հարցերով լիազոր մարմնի եզրակացության»:

ՄԱԿ ՓԳՀ-ն մտահոգված է, որ Փախստականների մասին օրենքի 11-րդ հոդվածի 1-ին մասի առաջարկվող լրամշակմամբ Փախստականների մասին օրենքի՝ բացառում նախատեսող դրույթներում, որոնք այս պահի դրությամբ համապատասխանում են Փախստականների մասին 1951 թվականի կոնվենցիային, կկատարվեն էական փոփոխություններ: Փախստականների մասին 1951 թվականի կոնվենցիայի 1-ին հոդվածի «Դ» մասի 1-ին կետում, 1-ին հոդվածի «Ե» մասում և 1-ին հոդվածի «Զ» մասում սպառիչ կերպով թվարկված են փախստականի կարգավիճակը բացառող հիմքերը, ընդ որում Փախստականների մասին 1951 թվականի կոնվենցիայի համապատասխան սահմանումների պահանջներն այլ առումներով բավարարող անձին փախստականի կարգավիճակի տրամադրման մերժման որևէ լրացուցիչ հիմք նախատեսվել չի կարող:

Փախստականների մասին օրենքի 11-րդ հոդվածի 1-ին մասի առաջարկվող լրամշակմամբ Փախստականների մասին 1951 թվականի կոնվենցիայի 32-րդ հոդվածի (ընդունող պետության տարածքում օրինական կերպով գտնվող փախստականի արտաքսում, սակայն միայն այն երկիր, որտեղ նրան չի սպառնա հետապնդման ենթարկվելու վտանգը) և 33-րդ հոդվածի 2-րդ մասի (*չվերադարձելիության* սկզբունքի բացառություններ) դրույթները նույնացվում են 1-ին հոդվածի «Զ» մասի բացառման դրույթների (փախստականի կարգավիճակի մերժումը ծանր հանցագործությունների կամ հրեշավոր

արարքների մեջ անձի ներգրավման հիման վրա) հետ: Այդուհանդերձ, Փախստականների մասին 1951 թվականի կոնվենցիայի համաձայն՝ 1-ին հոդվածի «Ձ» մասով նախատեսված փախստականի կարգավիճակը բացառող դրույթները և *չվերադարձելիության* սկզբունքի բացառություններով պայմանավորված արտաքսումը և (կամ) վերադարձը ծառայում են տարբեր նպատակների և իրենցից ներկայացնում են երկու տարբեր գործընթացներ:

Փախստականների մասին 1951 թվականի կոնվենցիայի 1-ին հոդվածի «Ձ» մասով նախատեսված բացառման դրույթները, որոնք պատշաճ կերպով արտացոլված են Փախստականների մասին օրենքի 11-րդ հոդվածի 1-ին մասում, ունեն երկակի նպատակ: Առաջին՝ որոշ արարքներ այնքան ծանր են, որ կարող են դրանք գործած անձանց դարձնել ոչ արժանի միջազգային պաշտպանությունից օգտվելու համար: Երկրորդ՝ փախստականների համար նախատեսված իրավական համակարգը չպետք է արգելք դառնա, որ ծանր հանցագործություններ կատարած անձինք հայտնվեն արդարադատության առջև: Ի տարբերություն վերոնշյալի՝ *ճանաչված փախստականի* արտաքսումը կամ վերադարձը ծագման երկիր կոչված է պաշտպանել ապաստան տված երկրի անվտանգությունը և պայմանավորված է ներկա կամ ապագա սպառնալիքի գնահատմամբ:¹ Փախստականների մասին 1951 թվականի կոնվենցիայի 33-րդ հոդվածի 2-րդ մասը որոշ հանգամանքներում նախատեսում է *չվերադարձելիության* սկզբունքի բացառություններ և արդեն իսկ պատշաճ և արդյունավետ կերպով ընդգրկված է Փախստականների մասին օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի երկրորդ պարբերությունում, ինչպես նաև անուղղակիորեն՝ 10-րդ հոդվածի 3-րդ մասում:

ՄԱԿ ՓԳՀ-ն գնահատում է այն հանգամանքը, որ Նախագծի հիմնավորումներում հղում է կատարվում «Երրորդ երկրների քաղաքացիների կամ քաղաքացիություն չունեցող անձանց որպես միջազգային պաշտպանությունից օգտվող, փախստականների միասնական կարգավիճակի կամ օժանդակ պաշտպանության իրավունք ունեցող անձանց որակավորման չափանիշների, ինչպես նաև շնորհվող պաշտպանության բովանդակության վերաբերյալ» Եվրոպական պառլամենտի և խորհրդի 2011թ. դեկտեմբերի 13-ի թիվ 2011/95/EU դիրեկտիվի 14-րդ հոդվածին (այսուհետ՝ 2011 թվականի Որակավորման մասին դիրեկտիվ):² Այդուհանդերձ, ինչպես բացատրվում է

¹ ՄԱԿ-ի Փախստականների հարցերով զերգույն հանձնակատար (ՄԱԿ ՓԳՀ), «UNHCR Annotated Comments on the EC Council Directive 2004/83/EC of 29 April 2004 on Minimum Standards for the Qualification and Status of Third Country Nationals or Stateless Persons as Refugees or as Persons Who Otherwise Need International Protection and the Content of the Protection Granted» (ՄԱԿ ՓԳՀ-ի մեկնաբանություններ ծանոթագրություններով 2004 թվականի ապրիլի 29-ի «Որակավորման նվազագույն չափանիշների և երրորդ երկրների քաղաքացիների կամ քաղաքացիություն չունեցող անձանց որպես փախստականների կամ որպես այլ իմաստով միջազգային պաշտպանության կարիք ունեցող անձանց կարգավիճակի և վերջիններին շնորհվող պաշտպանության բովանդակության վերաբերյալ» ԵՄ խորհրդի թիվ 2004/83/EC հանձնարարականի վերաբերյալ) (OJ L 304/12 տրված 30.9.2004), 28 հունվարի 2005թ., էջեր՝ 30-31, կարելի է գտնել հետևյալ հղումով՝ <http://www.refworld.org/docid/4200d8354.html>:

² Եվրոպական Միության՝ Եվրոպական Միության խորհուրդ, «Երրորդ երկրների քաղաքացիների կամ քաղաքացիություն չունեցող անձանց որպես միջազգային պաշտպանությունից օգտվող, փախստականների

ստորև, 2011 թվականի Ռրակավորման մասին դիրեկտիվը չի արդարացնում Նախագծում որդեգրված մոտեցումը:

ՄԱԿ ՓԳՀ-ն ցանկանում է ընդգծել, որ Փախստականների մասին 1951 թվականի կոնվենցիան և դրա 1967 թվականի արձանագրությունը փախստականների պաշտպանության միջազգային համակարգի անկյունաքարերն են: Այս իրողությունը վերահաստատված է «Եվրոպական միության գործունեության մասին»³ պայմանագրի 78-րդ հոդվածով, որով նախատեսվում է, որ ապաստանի, լրացուցիչ պաշտպանության և ժամանակավոր պաշտպանության ոլորտում միության ընդհանուր քաղաքականությունը պետք է համապատասխանի Փախստականների մասին 1951 թվականի կոնվենցիային և դրա 1967 թվականի արձանագրությանը: 2011 թվականի Ռրակավորման մասին դիրեկտիվի 14-րդ հոդվածի 4-րդ և 5-րդ մասերում մեջբերվում է «*փախստականին շնորհված կարգավիճակը*», ընդ որում ՄԱԿ ՓԳՀ-ն առաջարկել է, որ ազգային անվտանգության հիմունքներով փախստականին կարգավիճակ չշնորհելու մասին որոշում կայացնելու անդամ պետությունների իրավունքը նախատեսող 14-րդ հոդվածի 5-րդ մասում նշված «*կարգավիճակ*» բառն անդամ պետությունների կողմից պետք է ընկալվի որպես պետության կողմից տրամադրված պաշտպանություն, այլ ոչ թե որպես փախստականի կարգավիճակ Փախստականների մասին 1951 թվականի կոնվենցիայի 1-ին հոդվածի «Ա» մասի 2-րդ կետի իմաստով, ինչպես նշում է ՄԱԿ ՓԳՀ-ն:⁴ Եվրոպական միության Արդարադատության դատարանի Գլխավոր փաստաբանն ունեցել է նմանատիպ եզրահանգումներ նախնական որոշման կայացման համար դատարանի վարույթում հայտնված երեք գործերի առնչությամբ՝ *ի թիվս այլոց* անդրադառնալով այն հարցին, թե արդյոք Ռրակավորման մասին դիրեկտիվի 14-րդ հոդվածի 4-րդ, 5-րդ և 6-րդ մասերը համապատասխանում են Փախստականների մասին 1951 թվականի կոնվենցիային: Հիմք ընդունելով վերոնշյալ դրույթների վերլուծությունը՝ Եվրոպական միության համապատասխան օրենսդրական դրույթների, ինչպես նաև Փախստականների մասին 1951 թվականի կոնվենցիայի դրույթների լուսի ներքո՝ Գլխավոր փաստաբանը եզրակացրել էր, որ Ռրակավորման մասին դիրեկտիվի 14-րդ հոդվածի 4-րդ և 5-րդ մասերը չեն նախատեսում

միասնական կարգավիճակի կամ օժանդակ պաշտպանության իրավունք ունեցող անձանց ռրակավորման չափանիշների, ինչպես նաև շնորհվող պաշտպանության բովանդակության վերաբերյալ» (նոր խմբագրությամբ) Եվրոպական Միության, Եվրախորհրդարանի և Եվրոպայի Խորհրդի 2011թ. դեկտեմբերի 13-ի թիվ 2011/95/EU հանձնարարական, 20 դեկտեմբերի 2011թ., OJ L. 337/9-337/26; 20.12.2011, 2011/95/EU, կարելի է գտնել հետևյալ հղումով. <https://eur-lex.europa.eu/legal-content/EN/TXT/?uri=CELEX%3A32011L0095> և <http://www.refworld.org/docid/4f197df02.html>:

³ Եվրոպական Միություն, «Եվրոպական Միության գործունեության մասին» պայմանագրի ամբողջական տարբերակ, 26 հոկտեմբերի 2012թ., OJ L. 326/47-326/390, 26.10.2012, կարելի է գտնել հետևյալ հղումով. <https://eur-lex.europa.eu/legal-content/EN/TXT/?uri=celex%3A12012E%2FTXT>:

⁴ ՄԱԿ ՓԳՀ-ի մեկնաբանություններ Եվրոպական հանձնաժողովի կողմից առաջարկված «Երրորդ երկրների քաղաքացիների կամ քաղաքացիություն չունեցող անձանց որպես միջազգային պաշտպանությունից օգտվող, փախստականների միասնական կարգավիճակի կամ օժանդակ պաշտպանության իրավունք ունեցող անձանց ռրակավորման չափանիշների, ինչպես նաև շնորհվող պաշտպանության բովանդակության վերաբերյալ» հանձնարարականի վերաբերյալ (COM(2009)551, 21 հոկտեմբերի 2009թ.), էջ 14, կարելի է գտնել հետևյալ հղումով <http://www.unhcr.org/4c5037f99.pdf>:

փախստականի կարգավիճակի բացառման կամ դադարեցման լրացուցիչ հիմքեր. փոխարենը՝ այդ դրույթների կիրառումը նշանակում է, որ խնդրո առարկա անձը շարունակում է փախստական մնալ, սակայն այլևս չի օգտվում *հարկադիր վերադարձից* պաշտպանության իրավունքից, իսկ ընդունող պետությունն իրավասու է ետ կանչել այն իրավունքներն ու արտոնությունները, որոնց տրամադրումը, համաձայն Փախստականների մասին 1951 թվականի կոնվենցիայի, պայմանավորված է երկրի տարածքում անձի օրինական գտնվելու կամ բնակվելու հանգամանքով:⁵

ՄԱԿ ՓԳՀ-ն վճռականորեն առաջարկում է հրաժարվել Փախստականների մասին օրենքի 11-րդ հոդվածի 1-ին մասի առաջարկվող լրամշակումից:

2. Փախստականների մասին օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ մասի առաջարկվող լրացումը

Փախստականների մասին օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ մասի առաջարկվող լրամշակումը ներկայացվում է հետևյալ ձևակերպմամբ.

«Ապաստանի տրամադրումը մերժվում է, եթե ազգային անվտանգության հարցերով լիազոր մարմնի եզրակացության համաձայն ապաստան հայցողը հնարավոր վտանգ է ներկայացնում Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության համար»:

Թեև Փախստականների մասին 1951 թվականի կոնվենցիայի 32-րդ հոդվածի և 33-րդ հոդվածի 2-րդ մասի դրույթներով ապաստանի մերժումն ու արտաքսումն այն փախստականի պարագայում, ում վերաբերյալ կան լուրջ հիմքեր կարծելու, որ վերջինս վտանգ է ներկայացնում ապաստան տված երկրի անվտանգության համար, թույլատրելի է համարվում համապատասխան չափորոշիչների բավարարման դեպքում, ՄԱԿ ՓԳՀ-ն երկու մտահոգիչ խնդիր է տեսնում 11-րդ հոդվածի 2-րդ մասի առաջարկվող լրամշակման կապակցությամբ:

Առաջին՝ Փախստականների մասին 1951 թվականի կոնվենցիայի՝ չվերադարձելիության սկզբունքի բացառում նախատեսող 33-րդ հոդվածի 2-րդ մասում մեջբերվում է այն փախստականը, *«ով հիմնավոր պատճառներով վտանգավոր է համարվում իր գտնված երկրի անվտանգության համար»*, մինչդեռ առաջարկվող դրույթը վերաբերում է միայն *«հնարավոր վտանգին»*. *«Հնարավոր վտանգ»* եզրույթը կրում է ընդհանուր բնույթ և կարող է ենթարկվել

⁵ Գլխավոր փաստաբանի եզրակացությունը միացված «C-391/16 M v Ministerstvo vnitra» և «C-77/17 and C-78/17 X v Commissaire général aux réfugiés et aux apatrides» գործերի վերաբերյալ, 21 հունիսի 2018թ.: Կարելի է գտնել ֆրանսերեն լեզվով հետևյալ հղումով՝ <http://curia.europa.eu/juris/document/document.jsf?text=&docid=203230&pageIndex=0&doclang=FR&mode=req&dir=&occ=first&part=1&cid=991198>: Մամուլի հաղորդագրությունը անգլերեն լեզվով կարելի է գտնվել հետևյալ հղումով՝ <https://curia.europa.eu/jcms/upload/docs/application/pdf/2018-06/cp180089en.pdf>:

սուբյեկտիվ և (կամ) կամայական մեկնաբանության՝ հղի լինելով երկրի անվտանգությանը սպառնացող այն վտանգի լրջության պահանջվող շեմի իջեցման ռիսկով, որով կարդարացվի *չվերադարձելիության* սկզբունքի բացառության կիրառումը:

Ընդհանուր իրավական սկզբունք է, որ մարդու իրավունքների վերաբերյալ միջազգային համաձայնագրերի բացառությունները պետք է մեկնաբանվեն սահմանափակ իմաստով:⁶ Փախստականների մասին 1951 թվականի կոնվենցիայի 33-րդ հոդվածի 2-րդ մասը *«բացառություն է կազմում 1-ին մասում գետեղված ընդհանուր սկզբունքից և բոլոր բացառությունների օրինակով պետք է մեկնաբանվի սահմանափակ իմաստով: Ազգային անվտանգության ամեն նկատառում չի կարող վկայակոչվել [...]»*:⁷ Այսպիսով, թեև պետություններին ակնհայտորեն վերապահված է Փախստականների մասին 1951 թվականի կոնվենցիայի 33-րդ հոդվածի 1-ին մասի բացառությունները կիրառելու որոշակի հայեցողություն, այն այդուհանդերձ անսահմանափակ չէ:⁸

Հարկադիր վերադարձի արգելքի հիմնարար բնույթը և Փախստականների մասին 1951 թվականի կոնվենցիայի մարդասիրական բնույթն առավել ընդհանուր իմաստով պետք է դիտարկվեն որպես Փախստականների մասին 1951 թվականի կոնվենցիայով նախատեսված բացառությունների կիրառման համար բարձր շեմ հաստատող: Այս հանգամանքը հատկապես պայմանավորված է անհատի համար *հարկադիր վերադարձից* բխող ծանր հետևանքներով: Հետևաբար, Փախստականների մասին 1951 թվականի կոնվենցիայի 33-րդ հոդվածի 2-րդ մասի դրույթներով նախատեսված երկրի անվտանգությանը սպառնացող վտանգը պետք է ընկալվի որպես շատ լուրջ, այլ ոչ թե որպես պակաս նշանակալի վտանգ:⁹ Երկրի անվտանգությամբ պայմանավորված բացառությունը վկայակոչվում է բավականին ծանր բնույթի արարքների պարագայում, որոնք ուղղակի կամ անուղղակի վտանգ են ներկայացնում խնդրո առարկա երկրի Սահմանադրության, կառավարության, տարածքային ամբողջականության, անկախության կամ արտաքին խաղաղության համար:¹⁰ Փախստականների մասին 1951 թվականի կոնվենցիայի 33-րդ հոդվածի 2-րդ մասն ընդգրկում է այնպիսի վարքագծի դրսևորումներ, ինչպիսիք են՝ ընդունող պետության կառավարությունը բռնությամբ կամ այլ ապօրինի միջոցներով տապալելու փորձերը, մեկ այլ պետության դեմ ուղղված գործողությունները, որոնք կարող են բերել

⁶ ՄԻԵԴ, գործ *«Klass v. Germany»*, կետ 42 (1978թ.), ՄԻԵԴ, գործ *«Winterwerp v. The Netherlands»*, կետ 37 (1979թ.):
⁷ Պոլ Ուայս, *«The Refugee Convention, 1951: The Travaux préparatoires Analyzed with Commentary by Dr. Paul Weiss»*, էջ 342 (հրատարակչություն՝ Cambridge University Press, 1995թ.):
 Տե՛ս նաև Ս. Ելիհու Լաուտերպայխտ և Դանիել Բեթլեհեմ, (*հրատարակչություն՝ Cambridge University Press*) *«The Scope and Content of the Principle of Non-Refoulement: Opinion»*, 2003թ. հունիս, կարելի է գտնել հետևյալ հղումով՝ <http://www.refworld.org/docid/470a33af0.html>, կետ 159(iii):
⁸ Տե՛ս՝ Լաուտերպայխտ և Դանիել Բեթլեհեմ, կետեր 167-68:
⁹ Տե՛ս Լաուտերպայխտ և Բեթլեհեմ, կետ 169:
¹⁰ Աթլե Գլալ-Մադսեն, *«Commentary on the Refugee Convention 1951: Article 2-11, 13-37»*, կետ 236 (ձեռագիր, 1963թ., հրատարակված է ՄԱԿ ՓԳՀ-ի կողմից 1997 թվականին):

պատասխան պատժամիջոցների ընդդեմ ընդունող պետության, ահաբեկչության կամ լրտեսության գործողությունները, ընդ որում երկրի անվտանգության սպառնալիքը կարող է միայն նշանակել, որ տվյալ փախստականը **լուրջ վտանգ** պետք է ներկայացնի պետության հիմքերի կամ բուն գոյության համար, որպեսզի հետապնդման երկիր նրա վերադարձը համարվի թույլատրելի:¹¹

Փախստականների մասին 1951 թվականի կոնվենցիայի 33-րդ հոդվածի 2-րդ մասի պատշաճ մեկնաբանությունն ու կիրառումը պահանջում է նաև արտաքսման միջոցառման համաչափության գնահատում, ինչը նշանակում է, որ. (1) պետք է տրամաբանական կապ լինի երկրի տարածքից փախստականի հեռացման և վտանգի վերացման միջև, (2) *հարկադիր վերադարձը* պետք է լինի այդ վտանգի վերացման վերջին հնարավոր ծայրահեղ միջոցը, (3) ապաստան տված երկրին սպառնացող վտանգը պետք է գերակշռի *հարկադիր վերադարձի* դեպքում փախստականին սպառնացող վտանգի համեմատ: ՄԱԿ ՓԳՀ-ի ընկալմամբ՝ նման հավասարակշռող մոտեցման անհրաժեշտությունը պայմանավորված է նաև ՀՀ Սահմանադրության 78-րդ հոդվածով հստակ նախատեսված համաչափության սկզբունքով:¹²

Երկրորդ՝ թեև Փախստականների մասին 1951 թվականի կոնվենցիայի 33-րդ հոդվածի 2-րդ կետն ապացուցման չափանիշը սահմանում է *«հիմնավոր պատճառներով վտանգավոր է համարվում»* ձևակերպմամբ, 11-րդ հոդվածի 2-րդ մասում առաջարկվող դրույթում մեջբերվում է *«ազգային անվտանգության հարցերով լիազոր մարմնի եզրակացությունը»*: ՄԱԿ ՓԳՀ-ն կարծում է, որ Հայաստանի Հանրապետությունում ներկայումս գործող օրենսդրությամբ և գործելակերպով, որոնց համաձայն փախստականի կարգավիճակի որոշման և ապաստանի տրամադրման վերաբերյալ որոշում կայացնող մարմինը ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարության Միգրացիոն ծառայությունն է, դրույթը, որի համաձայն ազգային անվտանգության հարցերով լիազոր մարմնի եզրակացությունը ինքնին բավարար է Միգրացիոն ծառայության կողմից *չվերադարձելիության* սկզբունքի բացատրություն կիրառելու համար, կամ ըստ որի նման եզրակացության վրա հիմնվելը պարտադիր կլինի, ենթադրում է մի շարք ռիսկեր, այդ թվում, բայց ոչ միայն, հետևյալը.

- Մոսկ Հայաստանի Հանրապետության Ազգային անվտանգության ծառայության (ԱԱԾ) կողմից տրված եզրակացության վրա հիմնվելը

¹¹ Վալտեր Կելին, «Das Prinzip des Non-refoulement», Europäische Hochschulschriften», հատոր 298, կետ 131 (Բերն, Ֆրանկֆուրտ, Պետեր Լանգ, 1982թ.) (ոչ պաշտոնական թարգմանություն գերմաներեն բնագրից):

¹² ՀՀ Սահմանադրության 78-րդ հոդվածի համաձայն «[հ]իմնական իրավունքների և ազատությունների սահմանափակման համար ընտրված միջոցները պետք է պիտանի և անհրաժեշտ լինեն Սահմանադրությամբ սահմանված նպատակին հասնելու համար: Սահմանափակման համար ընտրված միջոցները պետք է համարժեք լինեն սահմանափակվող հիմնական իրավունքի և ազատության նշանակությանը»:

Միգրացիոն ծառայությանը չի ընձեռի հնարավորություն ըստ արժանվույն անդրադառնալ վերը բացատրված համաչափության նկատառումների բոլոր հայեցակետերին՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ ԱԱԾ-ն իր պարտականությունների բերումով չի ուսումնասիրում ծագման երկիր վերադարձվելու դեպքում փախստականին սպառնացող հետապնդման ձևը, բնույթը և լքությունը: Այդուհանդերձ, այս գործոնն առանցքային նշանակություն ունի համաչափության ցանկացած գնահատման համար:

- Ապացուցման պահանջվող չափանիշի, այն է՝ *«հիմնավոր պատճառներով վտանգավոր համարվելու»* հստակ չափանիշի բացակայության պայմաններում՝ առաջարկվող կանոնակարգումը պարունակում է նման չափանիշն իջեցնելու վտանգ: Հարկ է նշել, որ վտանգավորության որոշումը կարող է *«ողջամիտ»* լինել միայն հուսալի և արժանահավատ ապացույցներով ըստ հարկի հիմնավորված լինելու պարագայում: Որոշում կայացնող մարմինը պարտավոր է, մասնավորապես, անդրադառնալ այն հարցին, թե արդյոք առկա է որևէ վտանգ ապագայում, ընդ որում այդ հարցի վերաբերյալ եզրակացությունը պետք է հիմնված լինի ապացույցների վրա:
- Վտանգ կա, որ որոշումներն այն հարցի վերաբերյալ, թե արդյոք տվյալ անձը վտանգ է ներկայացնում ազգային անվտանգության համար, թե ոչ, կարող են կայացվել այնպիսի ընթացակարգերով, որոնց շրջանակներում խնդրո առարկա անձինք իրավասու չեն լինի տեսնել իրենց դեմ բերվող բոլոր ապացույցները կամ արդյունավետ կերպով արձագանքել իրենց ուղղված մեղադրանքներին, ինչը բարձրացնում է գործնականում այս դրույթը չարաշահելու հավանականությունը: Այս առնչությամբ ՄԱԿ ՓԳՀ-ն ցանկանում է վերհիշել, որ Փախստականների մասին 1951 թվականի կոնվենցիայի 33-րդ հոդվածի 2-րդ մասի կիրառումը պահանջում է անհատականացված ընթացակարգ, որի շրջանակներում նվազագույնը կապահովվեն Փախստականների մասին 1951 թվականի կոնվենցիայի 32-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերով նախատեսված երաշխիքները:

Վերջին կետի առնչությամբ ՄԱԿ ՓԳՀ-ն նկատի է առնում պատշաճ վարչարարության և լաված լինելու իրավունքի վերաբերյալ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ և օրենսդրությամբ ամրագրված պահանջները,¹³ ինչպես նաև ՀՀ Վճռաբեկ դատարանի նախադեպային պրակտիկան:¹⁴ Այդուհանդերձ, ՄԱԿ ՓԳՀ-ն ականատես է դարձել այնպիսի դեպքերի, երբ ԱԱԾ-ի այսպես կոչված եզրակացությունները, որոնք չեն պարունակել որևէ փաստական տվյալ կամ հիմնավորում, հիմք են ծառայել

¹³ ՀՀ Սահմանադրության 50-րդ հոդված, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդված:

¹⁴ Տե՛ս, օրինակ, թիվ ՎԴ/0016/05/08 վարչական գործով ՀՀ Վճռաբեկ դատարանի կայացրած որոշումը:

փախստականին ապաստանից զրկելու համար: Նման դեպքերում դիմումատուները և նրանց ներկայացուցիչները և (կամ) փաստաբանները զրկված են եղել եզրակացության հիմքում ընկած տեղեկատվության վավերականությունը, ճշգրտությունը կամ վերաբերելիությունը վիճարկելու հնարավորությունից: Իրականում նման տեղեկատվությունը չի տրամադրվել նաև ապաստանի հարցերով զբաղվող լիազոր մարմնին, ինչպես նաև դրա տրամադրումը ուղղակիորեն մերժվել է ՀՀ վարչական դատարանին «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի հիման վրա: ՄԱԿ ՓԳՀ-ն ցանկանում է ընդգծել, որ որևէ լրացուցիչ բացատրությամբ չուղեկցված հայտարարությունն առ այն, որ անձը սպառնալիք է ներկայացնում ազգային անվտանգության համար, առհասարակ խթան կծառայի մանրակրկիտ ուսումնասիրության համար՝ կոչված պարզելու *չվերադարձելիության* սկզբունքի բացառության հնարավոր կիրառելիությունը: Այդուհանդերձ, նման հայտարարությունը, որպես այդպիսին, բավարար չէ բացառության կիրառումը հիմնավորելու համար:

Ճանաչելով ազգային անվտանգության նկատառումների հետ կապված պետությունների իրավաչափ շահերը՝ ՄԱԿ ՓԳՀ-ն բազմիցս ընդգծել է պետության և անհատի շահերը արդար հավասարակշռության բերելու անհրաժեշտությունն այն դեպքերում, երբ խոսքը գնում է գաղտնի տեղեկությունների բացահայտման մասին: Այն դեպքերում, երբ առկա են մտահոգության տեղիք տվող հանգամանքներ, որ փախստականին համապատասխան տեղեկությունների հայտնումը կարող է վտանգել ապաստանի երկրի կամ որոշակի անձանց անվտանգությունը, փախստականին տրամադրվում է համապատասխան տեղեկությունների ամփոփ նկարագիրը, որը չի վտանգում ազգային անվտանգությունը կամ սպառնում անձանց անվտանգությանը, որպեսզի փախստականը հնարավորություն ունենա ողջամիտ կերպով տեղեկացվել *չվերադարձելիության* սկզբունքի բացառության կիրառման տեղիք տվող հանգամանքների մասին և ստանա լաված լինելու ողջամիտ հնարավորություն: Ազգային անվտանգության նկատառումների համատեքստում պետության շահերը և անհատի համար նախատեսված ընթացակարգային երաշխիքները հավասարակշռելու անհրաժեշտությունը բազմիցս ընդգծվել է Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կողմից:¹⁵

¹⁵ Տե՛ս, օրինակ, «Chahal vs. UK» թիվ 22414/93 գործի 131-րդ կետը, որում նշվում է հետևյալը. «Դատարանը ճանաչում է այն հանգամանքը, որ գաղտնի նյութերի օգտագործումը կարող է անխուսափելի լինել այն դեպքերում, երբ խոսքը վերաբերում է ազգային անվտանգությանը: Բայց և այնպես, այս իրողությունը չի նշանակում, որ ազգային իրավասու մարմինները կարող են ազատվել ներպետական դատարանների արդյունավետ վերահսկողությունից ցանկացած այն պարագայում, երբ որոշում են վկայակոչել ազգային անվտանգությունը և ահաբեկչությունը (տե՛ս, որոշակի վերապահումներով, «Fox, Campbell and Hartley v. the United Kingdom» գործով կայացված վճիռը, 30 օգոստոսի 1990 թ., սերիա A, թիվ 182, էջ 17, կետ 34, ինչպես նաև «Murray v. the United Kingdom» գործով կայացված վճիռը, 28 հոկտեմբերի 1994 թ., սերիա A, թիվ 300-A, էջ 27, կետ 58): Դատարանը կարևորում է այն հանգամանքը, որ Կանադայում մշակվել է այս տեսակի գործերի շրջանակներում դատական վերահսկողության առավել արդյունավետ ձև, ինչպես նշել են այս գործով որպես երրորդ անձ միջամտող կողմերը 13-րդ հոդվածի առնչությամբ (Հոդ. 13) (տե՛ս ստորև կետ 144): Այս օրինակը վկայում է այն մասին, որ գոյություն ունեն մեխանիզմներ, որոնք կարող են գործի դրվել օպերատիվ տվյալների բնույթի և աղբյուրների անվտանգության իրավաչափ նկատառումները բավարարելու համար՝ միաժամանակ խնդրո առարկա անձի համար ապահովելով ընթացակարգային արդարադատության զգալի բաժին»:

ՄԱԿ ՓԳՀ-ն նշում է, որ պետությունների օրենսդրության և գործելակերպի մեջ ներդրվել են մի քանի մեխանիզմներ, որոնք կոչված են լուծել գաղտնի տեղեկատվության բացահայտման խնդիրը, այդ թվում՝ Կանադայում և Միացյալ Թագավորությունում «հատուկ փաստաբանների» համակարգը, որը կարող է ծառայել որպես ուսումնասիրության արժանի միջազգային գործելակերպի օգտակար օրինակ:¹⁶

Ավելին, ՄԱԿ ՓԳՀ-ն ցանկանում է նաև նշել, որ չվերադարձելիության սկզբունքի բացառությունները արդեն իսկ ընդգրկվել են Փախստականների մասին օրենքում 2015 թվականի լրամշակումների շրջանակներում, մասնավորապես Փախստականների մասին օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի երկրորդ պարբերությունում, եթե այն մեկնաբանվի 2-րդ հոդվածի 1-ին մասի դրույթների հետ համակցությամբ: Այսպիսով, ՄԱԿ ՓԳՀ-ի ընկալմամբ՝ Փախստականների մասին օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի երկրորդ պարբերությունը կյանքի կոչելու համար, այն է՝ մերժել ապաստանի տրամադրումը այն փախստականին, ով հիմնավոր պատճառներով վտանգավոր է համարվում ազգային անվտանգության համար, բավարար կլինի ընդամենը 11-րդ հոդվածում հղում կատարել 9-րդ հոդվածի 1-ին մասի երկրորդ պարբերությանը: Սրանով կապահովվի նաև այն, որ Փախստականների մասին օրենքում ըստ հարկի կարտացոլվեն ինչպես *անվտանգության սպառնալիքը*, այնպես էլ *հանրային վտանգի* հիմքով Փախստականների մասին 1951 թվականի կոնվենցիայի 33-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված բացառությունները:

Տե՛ս նաև «*Ljati v. the Former Yugoslav Republic of Macedonia*» թիվ 22414/93 գործի 131-րդ կետը, որում նշվում է հետևյալը. [...] նույնիսկ այն դեպքերում, երբ որպես խնդրո առարկա հանդես է գալիս ազգային անվտանգությունը, ժողովրդավարական հասարակությունում օրինականության և օրենքի գերակայության գաղափարները պահանջում են, որ հիմնարար մարդու իրավունքների վրա անդրադարձող արտաքսման միջոցառումները ենթակա լինեն որոշակի մրցակցային ընթացակարգի՝ այնպիսի անկախ մարմնի կամ դատարանի առջև, որը իրավասու կլինի արդյունավետ կերպով քննության առնել ներկայացված պատճառաբանությունը և քննել համապատասխան ապացույցները՝ անհրաժեշտության դեպքում գաղտնի տեղեկությունների օգտագործման պատշաճ ընթացակարգային սահմանափակումներով հանդերձ: Անհատը պետք է հնարավորություն ունենա վիճարկել գործադիր մարմնի այն պնդումը, որ ազգային անվտանգությունը վտանգված է: Թեև ազգային անվտանգության համար սպառնալիք ներկայացնող իրողության գնահատումը գործադիր մարմնի կողմից բնականորեն ծանրակշիռ կլինի, սակայն անկախ մարմինը կամ դատարանը պետք է հնարավորություն ունենան արձագանքել այն դեպքերում, երբ այս գաղափարի վկայակոչումը չունի ողջամիտ հիմքեր փաստերի տեսքով, կամ երբ պարզվում է, որ ազգային անվտանգության մեկնաբանությունը հակասում է օրենքին կամ ողջամտությանը և կամայական է [...]:

Տե՛ս նաև «*A. and Others v. the UK*» թիվ 3455/05 գործով կայացված որոշումը, 19 փետրվարի 2009թ., կետ 204 «*C.G. and Others v. Bulgaria*» թիվ 1365/07 գործով կայացված որոշումը, 24 ապրիլի 2008թ., կետ 57:

¹⁶ Հատուկ փաստաբանի դերակատարումը զարգացել է ինչպես օրենքով նախատեսված, այնպես էլ իրենց ծագմամբ ոչ պաշտոնական ընթացակարգերի շրջանակներում՝ տարբեր ատյաններում, որտեղ կողմերից մեկը տվյալ ատյանի թույլտվությամբ փորձում է վկայակոչել «փակ» ապացույցներ: Փակ ապացույցները կարող են խնդրահարույց լինել ազգային անվտանգության առումով: Անհատների և նրանց օրինական ներկայացուցիչների մասնակցությունը բացառվում է այն լուսմներին, որոնց շրջանակներում օգտագործվում են փակ ապացույցներ: Հատուկ փաստաբանները կարևոր դերակատարում են իրականացնում՝ ներկայացնելով նշված լուսմներից հետացված կողմի շահերը և քննության առնելով գաղտնի նյութերը և դրանով իսկ ապահովելով ընթացակարգի արդարությունը:

Տե՛ս, օրինակ, Միացյալ Թագավորության խորհրդարան, Սահմանադրական գործերով ընտրական հանձնաժողովի յոթերորդ զեկույցը, «*The Special Advocate system as operated under SIAC*», կարելի է գտնել հետևյալ հղումով՝ <https://publications.parliament.uk/pa/cm200405/cmselect/cmconst/323/32307.htm>:

ՄԱԿ ՓԳՀ-ն առաջարկում է.

- Հրաժարվել Փախստականների մասին օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ մասի առաջարկվող լրամշակումից՝ հաշվի առնելով ներկայիս ձևակերպման անհամատեղելիությունը Փախստականների մասին 1951 թվականի կոնվենցիայի պահանջների հետ, ինչպես նաև ծավալուն նախապատրաստական աշխատանքների և խորհրդակցությունների անհրաժեշտությունը, որոնք թույլ կտան նախատեսել անհրաժեշտ միջոցներ՝ ուղղված Փախստականների մասին 1951 թվականի կոնվենցիայի 32-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերով պահանջվող, ինչպես նաև Մարդու իրավունքների Եվրոպական կոնվենցիայի համապատասխան դրույթներով նախատեսված և Մարդու իրավունքների Եվրոպական դատարանի նախադեպային պրակտիկայում արտացոլված նվազագույն ընթացակարգային երաշխիքների ապահովմանը:
- Նախաձեռնել գաղտնի տեղեկությունների (պետական կամ ծառայողական գաղտնիքների) բացահայտման վերաբերյալ օրենսդրական նորմերի համալիր վերանայում՝ ծավալուն խորհրդակցություններ անցկացնելով բոլոր շահառուների, այդ թվում՝ իրավաբանական համայնքի հետ՝ նպատակ ունենալով Փախստականների մասին օրենքում, ինչպես նաև համապատասխան այլ օրենսդրական ակտերում կատարել լրամշակումներ, որոնք հնարավորություն կընձեռեն փախստականին կամ նրա ներկայացուցչին ողջամիտ կերպով տեղեկանալ չվերադարձելիության սկզբունքի բացառության կիրառման տեղիք տվող հանգամանքների մասին և կապահովեն լսված լինելու ողջամիտ հնարավորություն՝ այդ թվում պաշտպանության/ապաստանի դադարեցման կամ մերժման ընթացակարգերի շրջանակներում՝ համաձայն Փախստականների մասին օրենքի գործող 10-րդ հոդվածի 3-րդ մասի կամ ապագայում 11-րդ հոդվածի հնարավոր լրամշակման:
- Լրացնել Փախստականների մասին օրենքի 11-րդ հոդվածը՝ որպես ապաստանի մերժման հիմք դրանում ընդգրկելով հղում 9-րդ հոդվածի 1-ին մասի երկրորդ պարբերությանը՝ պայմանով, որ Փախստականների մասին 1951 թվականի կոնվենցիայի 32-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերով, ինչպես նաև Մարդու իրավունքների Եվրոպական կոնվենցիայի համապատասխան դրույթներով նախատեսված և Մարդու իրավունքների Եվրոպական դատարանի նախադեպային պրակտիկայում արտացոլված պատշաճ ընթացակարգային երաշխիքներ կսահմանվեն օրենսդրության մեջ, և

Եթե ապաստանի մերժման համար համապատասխան հստակ հիմքի նախատեսումը Նախագծի հեղինակների կողմից դեռևս նպատակահարմար կհամարվի:

3. Փախստականների մասին օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասում առաջարկվող 8-րդ կետը

Փախստականների մասին օրենքի՝ փախստականի կարգավիճակի դադարեցման հիմքերը սահմանող 10-րդ հոդվածի 1-ին մասում առաջարկվող լրամշակումը ներկայացվում է հետևյալ ձևակերպմամբ.

«1. Անձի փախստականի կարգավիճակը դադարեցվում է, եթե նա՝

[...]

(8) հնարավոր վտանգ է ներկայացնում Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության համար՝ համաձայն ազգային անվտանգության հարցերով լիազոր մարմնի եզրակացության»:

ՄԱԿ ՓԳՀ-ն մտահոգված է, որ Փախստականների մասին օրենքի 10-րդ հոդվածի առաջարկվող դրույթը կարող է էական փոփոխություններ մտցնել Փախստականների մասին 1951 թվականի կոնվենցիայի 1-ին հոդվածի «Գ» մասում նախատեսված կարգավիճակի դադարեցման մասին դրույթներում, որոնցում սպառիչ կերպով թվարկվում են փախստականի կարգավիճակի դադարեցման հիմքերը, ընդ որում փախստականի կարգավիճակի դադարեցումը հիմնավորելու համար նմանօրինակության սկզբունքով չեն կարող մեջբերվել որևէ այլ հիմքեր:

ՄԱԿ ՓԳՀ-ն վճռականորեն առաջարկում է հրաժարվել Փախստականների մասին օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի առաջարկվող լրամշակումից:

Փախստականների մասին օրենքում հավելյալ լրամշակումների վերաբերյալ ՄԱԿ ՓԳՀ-ի առաջարկությունները

ՄԱԿ ՓԳՀ-ն ափսոսանքով նշում է, որ Նախագծում ընդգրկված չեն Փախստականների մասին օրենքի լրամշակումների վերաբերյալ ՄԱԿ ՓԳՀ-ի մի շարք առաջարկություններ, որոնք ներկայացվել են ՀՀ կառավարությանը «Փախստականների և ապաստանի մասին» օրենքի լրամշակումների նախագծի վերաբերյալ ՄԱԿ ՓԳՀ-ի դիտարկումներում 2014 թվականի դեկտեմբերին (ՄԱԿ ՓԳՀ-ի 2014 թվականի դիտարկումներ), որոնք կից ներկայացնում ենք դրանց մեջբերումը դյուրացնելու նկատառումով: Այսպիսով, ՄԱԿ ՓԳՀ-ն առաջարկում է օգտվել ընձեռված հնարավորությունից և անդրադառնալ Փախստականների մասին օրենքի մնացած բացերին՝ օրենքն էլ ավելի

համապատասխանեցնելով միջազգային իրավական նորմերին և չափանիշներին:

ՄԱԿ ՓԳՀ-ն կոչ է անում ՀՀ կառավարությանն օգտվել օրենսդրական այս նախաձեռնությամբ ընձեռված հնարավորությունից և անդրադառնալ «Փախստականների և ապաստանի մասին» ՀՀ օրենքի լրամշակումների նախագծի վերաբերյալ ՄԱԿ ՓԳՀ-ի 2014 թվականի դեկտեմբերի դիտարկումներում ներկայացված օրենսդրական լրամշակումների առաջարկություններին:

ՄԱԿ ՓԳՀ-ի 2014 թվականի դիտարկումների շրջանակներում ներկայացված առաջարկություններից գատ՝ ՄԱԿ ՓԳՀ-ն ցանկանում է ներկայացնել ստորև բերված ևս երկու առաջարկություն, որոնք բխում են վերջին շրջանում համապատասխան դրույթների գործնական կիրառությունը մշտադիտարկելու փորձից:

- Պետական մարմինների դերակատարումը հնարավոր ապաստան հայցողներին նախաձեռնողաբար հայտնաբերելու հարցում

Փախստականների մասին օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասում թվարկված՝ ապաստանի հայցեր ընդունելու և ուղղորդելու լիազորություն ունեցող մարմինների շրջանում ՄԱԿ ՓԳՀ-ն արձանագրել է որոշակի դժկամություն այն անձանց նախաձեռնողաբար հայտնաբերելու հարցում, ովքեր հնարավոր է՝ միջազգային պաշտպանության կարիք ունեն: Հաշվի առնելով շփման առաջին զժում գտնվող պաշտոնյաների, օրինակ՝ սահմանապահների, ոստիկանության կամ ազատությունից զրկման վայրերի աշխատակիցների առանցքային դերակատարումը միջազգային պաշտպանության արդյունավետ հասանելիության իրավունքի և չվերադարձելիության սկզբունքի ապահովման դյուրացման հարցում՝ հավանաբար պաշտպանության կարիք ունեցող անձանց նախաձեռնողական հայտնաբերման միջոցով, ՄԱԿ ՓԳՀ-ն ցանկանում է առաջարկել Փախստականների մասին օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի այն դրույթի ձևակերպման լրացուցիչ կատարելագործում, որը նախատեսում է Հայաստանի Հանրապետությունում ապաստանի հայց ներկայացնելու հնարավորության մասին տեղեկատվություն տրամադրելու համապատասխան մարմինների պարտականությունը:

ՄԱԿ ՓԳՀ-ն առաջարկում է վերանայել Փախստականների մասին օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի վերջին նախադասությունը՝ ընդգրկելով դրանում լրացուցիչ ձևակերպում առ այն, որ համապատասխան մարմինները պարտավոր են *ի պաշտոնե* արդյունավետ կերպով հայտնաբերել անձանց, որվքեր հնարավոր է՝ միջազգային պաշտպանության կարիք ունեն: Մասնավորապես, առաջարկվում է նշված դրույթը ձևակերպել հետևյալ

կերպ. «Սույն մարմինները նաև պարտավոր են հայտնաբերել անձանց, ովքեր հնարավոր է, որ միջազգային պաշտպանության կարիք ունեն, ինչպես նաև նրանց տրամադրել տեղեկատվություն Հայաստանի Հանրապետությունում ապաստանի հայց ներկայացնելու հնարավորության մասին»:

- Գաղտնիության սկզբունքը

Ապաստանի տրամադրման ընթացակարգերի շրջանակներում գաղտնիության սկզբունքը բխում է մարդու իրավունքների վերաբերյալ միջազգային իրավական նորմերից, որոնցով երաշխավորվում է յուրաքանչյուրի անձնական կյանքի գաղտնիության իրավունքը և անհատների պաշտպանությունը կամայական կամ ապօրինի միջամտությունից: Ապաստանի տրամադրման ընթացակարգերի շրջանակներում գաղտնիությունն առանձնապես կարևոր է՝ հաշվի առնելով այն խոցելի վիճակը, որում հայտնվում են փախստականներն ու ապաստան հայցողները: Անձնական կյանքի գաղտնիության իրավունքը և դրանից բխող գաղտնիության պահանջները հատկապես կարևոր են ապաստան հայցողների համար, ում դիմումն ըստ էության ենթադրում է ծագման երկրի իշխանությունների կողմից հետապնդման երկյուղ, և ում դրությունը կարող է վտանգվել տեղեկատվության պաշտպանության չապահովման պարագայում: Ապաստան տրամադրելու մասին դիմումի վերջնական մերժումից առաջ անձնական տվյալների կամ ապաստան հայցողներին առնչվող որևէ այլ տեղեկությունների տրամադրումը ծագման երկրի իշխանություններին հակասում է Փախստականների մասին 1951 թվականի կոնվենցիայի ոգուն: Ծագման երկրում ապաստան հայցողի ընտանիքի անդամների անվտանգությանը սպառնացող հնարավոր վտանգները նույնպես կարևոր նկատառում են հանդիսանում: Ինչպես նշվել է Միջազգային պաշտպանության վերաբերյալ համաշխարհային խորհրդակցությունների ընթացքում՝ «ապաստանի տրամադրման բոլոր ընթացակարգերի շրջանակներում պետք է պահպանվի ապաստան ստանալու մասին դիմումի բոլոր հայեցակետերի գաղտնիությունը, այդ թվում՝ ապաստան հայցողի կողմից նման խնդրանք ներկայացնելու փաստը» և ընդգծվել է, որ «ապաստան ստանալու մասին դիմումի վերաբերյալ որևէ տեղեկատվություն չպետք է տրամադրվի ծագման երկրին»:¹⁷

ՄԱԿ ՓԳՀ-ն նկատում է, որ գաղտնիության սկզբունքն ընդամենը սահմանափակ արտացոլում է գտել Փախստականների մասին օրենքի 51-րդ հոդվածի 9-րդ մասում, որն անդրադառնում է սոսկ ապաստան հայցողի հետ անցկացված հարցազրույցի շրջանակներում ստացված տեղեկատվության

¹⁷ ՄԱԿ-ի Փախստականների հարցերով գերագույն հանձնակատար (ՄԱԿ ՓԳՀ), «Asylum Processes (Fair and Efficient Asylum Procedures)», Համաշխարհային խորհրդակցություններ միջազգային պաշտպանության թեմայով, EC/GC/01/12, 31 մայիսի 2001թ., կետ 50(տ): Այս փաստաթուղթն իրենից ներկայացնում է լավագույն գործելակերպի, այդ թվում՝ ազգային օրենսդրական նորմերի հավաքածու <http://www.refworld.org/pdfid/3b36f2fca.pdf>:

գաղտնիությանը: Ականատես դառնալով վերջերս արձանագրված դեպքերին, երբ ապաստան ստանալու մասին դիմումի վերաբերյալ տեղեկատվությունը տրամադրվել է ծագման երկրի իշխանություններին՝ ՄԱԿ ՓԳՀ-ն առաջարկում է դիտարկել Փախստականների մասին օրենքի շրջանակներում գաղտնիության սկզբունքի կիրառման ոլորտի ընդլայնման հնարավորությունը՝ նպատակ ունենալով նախատեսել առավել ընդգրկուն երաշխիքներ գաղտնիության սկզբունքի հնարավոր խախտումներից զերծ մնալու համար:

ՄԱԿ ՓԳՀ-ն առաջարկում է Փախստականների մասին օրենքում կատարել լրամշակում՝ հստակ ամրագրելով, որ գաղտնիության սկզբունքը պետք է լիովին պահպանվի ապաստանի տրամադրման ընթացակարգի բոլոր փուլերում և բոլոր համապատասխան մարմինների կողմից, և, որպես կանոն, ապաստան հայցողի կամ ապաստան ստանալու մասին դիմումի վերաբերյալ որևէ տեղեկատվություն, այդ թվում՝ նման դիմումի ներկայացման փաստը, չպետք է հայտնվի ապաստան հայցողի ծագման երկրին:

ՄԱԿ ՓԳՀ, 2018թ. հունիս